



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 օգոստոսի 2020 թվականի N 310 -Ա

ԽՈՐԵՆ ՔՈՍԱԿՅԱՆԻՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 97-1.2-Մ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 97-1.2-Մ3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 27-ի եզրակացությունը և Խ.Քոսակյանի դիմումը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. 2020 թվականի սեպտեմբերի 1-ից Խորեն Քոսակյանին նշանակել Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 97-1.2-Մ3-1) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:
2. Խորեն Քոսակյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ (ծածկագիր՝ 97-1.2-Ղ5-1) Արմեն Մարտիրոսյանին:
3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
2020թ. օգոստոսի 31
ք. Կապան



Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ